

Հավելված № 2

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Խորհրդի որոշմամբ
Արձանագրություն №12, 22 հունիսի, 2010թ.

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն փաստաթղթով սահմանվում է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ (այսուհետև՝ «Բանկ») կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներում ակտիվների, պարտավորությունների և կապիտալի հաշվապահական հաշվառման վարման ու կիրառման միասնական քաղաքականությունը:

1.2. Բանկի Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը նշակվել է՝ հաշվի առնելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ «ՀՀ») օրենքի, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետև՝ «ՀՀ ԿԲ») հետ համատեղ ընդունված «Հաշվապահական հաշվառման հաշվային պլան և կից մեկնաբանություններ ՀՀ տարածքում գործող բանկերի համար» իրավական ակտի և այլ իրավական ակտերի պահանջները:

1.3. Բանկի Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներառում է այն բոլոր կրկնրետ սկզբունքները, հիմքերը, մեթոդները, կանոնները, ձևերը, հրամաններն ու որոշումները, կարգերն ու կանոնակարգերը, որոնք Բանկի կողմից ընդունվում են հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական հաշվետվությունների կազմման ու ներկայացման համար:

2. Նպատակը

2.1. Սահմանել Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այն է՝ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի համաձայն, Միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմքերի, եղանակների, կանոնների, ձևերի և ընթացակարգերի ամբողջությունը:

2.2. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում որևէ հարցի առնչվող՝ հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման մոտեցումների բացակայության դեպքում Բանկի ղեկավարությունը, ելնելով օբյեկտիվ անհրաժեշտությունից և նպատակահարմարությունից, դրանց մշակումը ու հաստատման ներկայացնելը հանձնարարում է համապատասխան կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներին, ինչը հնարավորություն կտա ապահովել Բանկում հաշվապահական հաշվառման ներդաշնակ վարումը, ինչպես նաև օգտակար տեղեկությունների տրամադրումը ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին:

3. Հաշվապահական հաշվառման նկատմամբ ընդհանուր մոտեցումները

3.1 Ֆինանսական ակտիվներ

Առևտրային նպատակով նախատեսված ֆինանսական ակտիվներ են հանդիսանում այն ակտիվները կամ պարտավորությունները, որոնք ձեռք են բերվել կամ ստանձնվել են գլխավորապես շահույթ կորզելու նպատակով՝ դիլերի գների կամ մարժայի կարճաժամկետ տատանումների արդյունքում: Ֆինանսական ակտիվը հարկ է դասակարգել որպես առևտրային նպատակով նախատեսված, եթե, անկախ դրա ձեռքբերման պատճառներից, այն հանդիսանում է պորտֆելի մաս, որի կառուցվածքը փաստացիորեն վկայում է կարճաժամկետ հեռանկարում շահույթ ստանալու ձգտման մասին: Ածանցյալ ֆինանսական ակտիվները և ածանցյալ ֆինանսական պարտավորությունները միշտ դիտարկվում են որպես առևտրային նպատակով նախատեսված, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք նախանշված են որպես

հեջավորման արդյունավետ գործիքներ (Առևտրային նպատակով նախատեսված պարտավորության օրինակը տե՛ս ՖՅՍՍ 39-ի կետ 18-ում):

Ֆինանսական գործիքը պայմանագիր է, որի արդյունքում մի ընկերության մոտ առաջանում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսի մոտ՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնենմասային գործիք:

Ֆինանսական ակտիվը այն ակտիվն է, որն իրենից ներկայացնում է.

- (ա) դրամական միջոցներ.
- (բ) այլ ընկերության բաժնենմասային գործիք.
- (գ) պայմանագրային իրավունք՝
 - (i) այլ ընկերությունից ստանալու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ,
 - (ii) այլ ընկերության հետ կատարելու ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների փոխանակում՝ իր համար պոտենցիալ շահավետ պայմաններով.
- (դ) պայմանագիր, որը կկարգավորվի կամ կարող է կարգավորվել ընկերության սեփական բաժնենմասային գործիքների տրամադրման միջոցով, և իրենից ներկայացնում է՝
 - (i) ոչ ածանցյալ ֆինանսական գործիք, որի համար ընկերությունը կստանա կամ պետք է ստանա սեփական բաժնենմասային գործիքների փոփոխական քանակություն.
 - (ii) ածանցյալ ֆինանսական գործիք, որը պետք է մարվի կամ կարող է մարվել որևէ այլ եղանակով, բացի դրամական միջոցների ֆիքսված գումարի կամ այլ ֆինանսական ակտիվի փոխանակումից ընկերության սեփական բաժնենմասային գործիքների ֆիքսված քանակությամբ: Սույն սահմանման նպատակով, ընկերության սեփական բաժնենմասային գործիքները չեն ներառում այն գործիքները, որոնք հանդիսանում են պայմանագրեր՝ ապագայում ընկերության սեփական բաժնենմասային գործիքների ստացման կամ տրամադրման մասին:

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ չորս դասերի.

(ա) Շահույթով կամ վնասով ճշգրտված՝ իրական արժեքով վերագնահատվող ակտիվներ – ֆինանսական գործիքներ, որոնք դասակարգված են որպես առևտրային նպատակով նախատեսված, կամ դասակարգվել են տվյալ դասում սկզբնական ճանաչման ժամանակ.

(բ) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ – հաստատագրված կամ որոշելի վճարումներով, հաստատուն մարման ժամկետ ունեցող ֆինանսական ակտիվներ, որոնք չեն դասվում «վարկեր և դիբիտորական պարտքեր» դասին, որոնց նկատմամբ առկա է դրանք մինչև մարումը պահելու մտադրություն և հնարավորություն, և որոնք չեն դասվել «շահույթով կամ վնասով ճշգրտված՝ իրական արժեքով վերագնահատվող» կամ «վաճառքի համար մատչելի» ակտիվների դասին.

(գ) Վարկեր և դեբիտորական պարտքեր – ակտիվ շուկաներում շրջանառության մեջ չգտնվող հաստատագրված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ, որոնք չեն դասակարգվում որպես «առևտրային նպատակով նախատեսված» ակտիվներ և չեն դասվել «շահույթով կամ վնասով ճշգրտված՝ իրական արժեքով վերագնահատվող» կամ «վաճառքի համար մատչելի» ակտիվների դասին.

(դ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ – ֆինանսական ակտիվներ, որոնք դասակարգված են որպես «վաճառքի համար մատչելի», կամ այլ ֆինանսական ակտիվներ, որոնք չեն դասակարգվել «վարկեր և դիբիտորական պարտքեր», «մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ» կամ «շահույթով կամ վնասով ճշգրտված՝ իրական արժեքով վերագնահատվող » ակտիվների դասերին:

Սկզբնական ճանաչում

Համաձայն ՖՀՄՍ (IAS) 39-ի դրույթների, ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթով կամ վնասով ճշգրտված՝ իրական արժեքով վերագնահատվող ֆինանսական ակտիվներ: Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվները գնահատվում են իրական արժեքով: Այն դեպքում, եթե ֆինանսական ակտիվը չի դասակարգվում որպես «շահույթով կամ վնասով ճշգրտված՝ իրական արժեքով վերագնահատվող» ֆինանսական ակտիվ, հաշվետվություններում արտացոլելիս դրա իրական արժեքին ավելացվում են դրա հետ անմիջականորեն կապված՝ գործարքի գծով ծախսերը: Ֆինանսական ակտիվներում հաշվառման ժամանակ Բանկը դրանց հատկացնում է համապատասխան դաս, իսկ հետագայում կարող է որոշակի դեպքերում իրականացնել ֆինանսական ակտիվների վերադասակարգում, ինչպես նկարագրված է ստորև:

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների գնման և վաճառքի բոլոր ստանդարտ գործարքները արտացոլվում են գործարքի ամսաթվով, այսինքն այն ամսաթվով, երբ Բանկը կնքել է ակտիվի գնման պայմանագիր: Գնման և վաճառքի ստանդարտ գործարքներին են վերաբերում ֆինանսական ակտիվի գնման կամ վաճառքի այն գործարքները, որոնց շրջանակներում պահանջվում է ակտիվների մատակարարում օրենսդրությամբ սահմանված կամ շուկայում ընդունված ժամկետներում:

«Առաջին օրվա շահույթ»

Եթե ոչ ակտիվ շուկայում գործարքի գինը տարբերվում է դիտարկվող շուկայում միևնույն գործիքի գծով ընթացիկ շուկայական գործարքների իրական արժեքից, կամ հիմնված է գնահատման մեթոդի վրա, որի ելակետային պարամետրերը նարառում են միայն դիտարկվող շուկաների տվյալները, ապա Բանկը գործարքի գնի և իրական արժեքի միջև առկա տարբերությունը («Առաջին օրվա շահույթ») անմիջապես ճանաչում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ոչ դիտարկվող տեղեկատվության օգտագործման դեպքում, մոդելի հիման վրա որոշված՝ գործարքի գնի և արժեքի տարբերությունը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է միայն այն դեպքում, եթե ելակետային տվյալները դառնում են դիտարկվող, կամ դադարում է ֆինանսական գործիքի ճանաչումը:

Շահույթով կամ վնասով ճշգրտված՝ իրական արժեքով վերագնահատվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգվել են որպես առևտրային նպատակով նախատեսված, ընդգրկվում են «շահույթով կամ վնասով ճշգրտված՝ իրական արժեքով վերագնահատվող ֆինանսական ակտիվների» դասում: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով նախատեսված, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառելու նպատակով: Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով նախատեսված, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արդյունավետ հեջավորման գործիքներ են: Առևտրային

նպատակով նախատեսված ֆինանսական ակտիվների գծով եկամուտներն ու ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ածանցյալ ֆինանսական գործիքը իրենից ներկայացնում է ֆինանսական գործիք կամ ՖՅՄՍ (IAS) 39-ի շրջանակներում կնքված այլ պայմանագիր, որն ունի հետևյալ բնութագրերը.

(ա) դրա արժեքը փոփոխվում է որոշակի տոկոսադրույքի, ֆինանսական գործիքի գնի, արժույթների փոխարժեքների, գների կամ փոխարժեքների ինդեքսների, վարկային վարկանիշի կամ վարկային ինդեքսի փոփոխությունների արդյունքում.

(բ) դրա ձեռքբերման համար չի պահանջվում զուտ ներդրումների առկայություն, կամ ներդրումներն ավելի քիչ են, քան այլ տեսակի պայմանագրերի համար, որոնք, ինչպես ակնկալվում է, շուկայական գործոնների փոփոխությունների արդյունքում կունենան համանման բնութագրիչներ.

(գ) դրա գծով հաշվարկներն իրականացվում են ապագա ամսաթվով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Հաստատագրված կամ որոշելի վճարումներով և հաստատուն մարման ժամկետ ունեցող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Բանկը մտադրված է կամ հնարավորություն ունի դրանք պահել մինչև մարման ժամկետը: Ներդրումները, որոնք Բանկը մտադրված է պահել անորոշ ժամկետով, չեն ներառվում տվյալ դասում: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Եկամուտներն ու ծախսերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են ներդրումների արժեզրկման, ինչպես նաև ամորտիզացման ժամանակ:

Վարկեր ու դեբիտորական պարտքեր

Վարկերն ու դեբիտորական պարտքերը ակտիվ շուկաներում շրջանառության մեջ չգտնվող, հաստատուն կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ գործիքներ են: Դրանք նախատեսված չեն անհապաղ կամ մոտ ապագայում վաճառքի համար և չեն

դասակարգվում որպես առևտրային գործարքների նպատակով նախատեսված կամ վաճառքի համար մատչելի ակտիվներ: Այդպիսի ակտիվները արտացոլվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այդպիսի ակտիվների գծով եկամուտներն ու ծախսերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են դրանց օտարման և արժեզրկման, ինչպես նաև ամորտիզացման ժամանակ:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկման և որոշակի ժամանակահատվածի ընթացքում տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման մեթոդն է:

Արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից առաջարկված մեթոդաբանությամբ, որը հաշվի է առնում վարկի օգտագործման դիմաց փոխառուի կողմից Բանկին վճարման ենթակա բոլոր տոկոսները, կոմիսիոն վճարներն ու գանձումները, որպես գրավ փոխանցվող գույքի պետական գրանցման և գնահատման հետ կապված վճարները, նոտարական ծառայությունների, ապահովագրական ծառայությունների վճարները:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի կամ ներառված չեն վերը թվարկված երեք դասերից ոչ մեկում: Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները գնահատվում են իրական արժեքով, ընդ որում եկամուտներն ու ծախսերը արտացոլվում են այլ համապարփակ եկամուտներում՝ մինչև ներդրումների օտարումը կամ արժեզրկումը: Այդ դեպքում, այլ համապարփակ եկամուտներում նախկինում ճանաչված կուտակված եկամուտներն ու ծախսերը վերադասակարգվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Սակայն տոկոսները, որոնք հաշվարկվել էին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Իրական արժեքի որոշում

Ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց առևտուրն իրականացվում է ակտիվ շուկաներում, հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշվում է շուկայական կամ Բանկի դիլերների գնանշման (գնման երկար դիրքի և վաճառքի կարճ դիրքի) միջոցով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսերը: Այլ ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց առևտուրը չի իրականացվում ակտիվ շուկաներում, որոշվում է գնահատման համապատասխան մեթոդների կիրառման միջոցով: Գնահատման մեթոդաբանությունները ներառում են զուտ բերված արժեքի հիման վրա համանման գործիքի հետ համեմատում, որի համար կան դիտարկվող շուկաներում սահմանված գներ, օպցիոնների գնահատման մոդել և գնահատման այլ մոդելներ:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցումը՝ ֆինանսական դրության մասին հաշվետվությունում արտացոլելով միայն զուտ մնացորդը, իրականացվում է միայն հաշվանցում կատարելու՝ իրավաբանորեն ամրագրված իրավունքի առկայության և ակտիվի իրացմանը զուգընթաց պարտավորությունները մարելու մտադրության դեպքում: Դա, որպես կանոն, չի իրականացվում հաշվանցման գլխավոր պայմանագրերի առնչությամբ, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական դրության մասին հաշվետվությունում արտացոլվում են լրիվ գումարով:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում

Եթե ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվի առնչությամբ, որը դասակարգվել է որպես առևտրային նպատակով նախատեսված, Բանկի այլևս չունի մոտ ապագայում վաճառելու մտադրություն, ապա այդ ակտիվը կարող է վերադասակարգվել «չահույթով կամ վնասով ճշգրտված՝ իրական արժեքով վերագնահատվող ֆինանսական ակտիվի» դասից՝ հետևյալ դեպքերում.

- վարկերի և դեբիտորական պարտքերի՝ վերը ներկայացված սահմանմանը համապատասխանող ֆինանսական ակտիվը կարող է վերադասակարգվել վարկերի և դեբիտորական պարտքերի դասում, եթե Բանկն ունի տվյալ ակտիվը

տեսանելի ապագայում կամ մինչև դրա մարման ժամկետը պահելու մտադրություն և հնարավորություն.

- այլ ֆինանսական ակտիվները վաճառքի համար մատչելի կամ մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների դասին կարող են դասակարգվել միայն հազվագյուտ դեպքերում:

Ֆինանսական ակտիվը, որը դասակարգվել է որպես վաճառքի համար մատչելի, վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը համապատասխանելու դեպքում կարող է վերադասակարգվել վարկերի և դեբիտորական պարտքերի դասում, եթե Բանկն ունի տվյալ ակտիվը տեսանելի ապագայում կամ մինչև դրա մարման ժամկետը պահելու մտադրություն և հնարավորություն:

Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են իրական արժեքով՝ վերադասակարգման ամսաթվով: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում նախկինում ճանաչված եկամուտներն ու ծախսերը չեն ճշգրտվում: Վերադասակարգման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի իրական արժեքը դառնում է դրա նոր սկզբնական արժեքը կամ ամորտիզացված արժեքը:

3.2 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, միջոցները ԶՅ ԿԲ-ում, ներառյալ պարտադիր պահուստները (բացառությամբ սահեցված գումարների), ինչպես նաև այլ բանկերում առկա միջոցները, որոնց մարման ժամկետը կազմում է ծագման ամսաթվից սկսած իննսուն օր, և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

3.3 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները արտացոլվում են ԶՅ ԿԲ կողմից հայտարարված միջին շուկայական գներով: ԶՅ ԿԲ կողմից հայտարարված միջին շուկայական գների փոփոխությունները հաշվի են առնվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես թանկարժեք մետաղների գնահատման արդյունք:

3.4 Ուեպո և հակադարձ ռեպո պայմանագրեր և արժեթղթերի փոխառության գործառնություններ

Չետզնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո» պայմանագրեր) ֆինանսական հաշվետվություններում արտացոլվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: «Ռեպո» պայմանագրերի շրջանակներում իրացված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական դրության մասին հաշվետվությունում (հաշվապահական հաշվեկշռում), և այն դեպքում, եթե կոնտրագենտն ունի պայմանագրի պայմաններից կամ համընդհանուր պրակտիկայից բխող՝ տվյալ արժեթղթերի վաճառքի իրավունք կամ կրկնակի գրավ, վերադասակարգվում են որպես «ռեպո» պայմանագրերով գրավադրված արժեթղթեր: Չանապատասխան պարտավորություններն ընդգրկվում են վարկային կազմակերպությունների կամ հաճախորդների միջոցների կազմում: Չետադարձ վաճառքի պայմանագրերով (հետադարձ «ռեպո») արժեթղթերի ձեռքբերումը արտացոլվում է վարկային կազմակերպություններում եղած միջոցների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և հետադարձ գնման գնի միջև եղած տարբերությունը դիտարկվում է որպես տոկոս և հաշվեգրվում է «ռեպո» պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Գրավի պայմաններով կոնտրագենտներին փոխանցված արժեթղթերը շարունակում են արտացոլվել ֆինանսական դրության մասին հաշվետվությունում: Փոխառության պայմաններով ներգրավված արժեթղթերը ֆինանսական դրության մասին հաշվետվությունում արտացոլվում են միայն երրորդ անձանց վաճառվելու դեպքում: Այս դեպքում, առուվաճառքի գործարքը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ եկամուտների կազմում, նվազեցրած առևտրային արժեթղթերով գործառնությունների հետ կապված ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորությունների կազմում՝ իրական արժեքով:

3.5 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները նախատեսված են առևտրային նպատակով և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է

շուկայական գնանշման հիման վրա, կամ բազային գործիքների ընթացիկ շուկայական ու պայմանագրային արժեքների և այլ գործոնների վրա հիմնված գնահատման մոդելներով: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում: Նշված գործիքներով գործառնություններից ստացված եկամուտներն ու ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ առևտրային արժեթղթերով գործառնությունների գծով զուտ եկամուտների/(ծախսերի) կազմում կամ արտարժույթով գործառնությունների (առևտրային գործառնություններ) գծով զուտ եկամուտների/(ծախսերի) կազմում, կախված ֆինանսական գործիքի տեսակից:

3.6 Մուրհակներ

Ձեռքբերված մուրհակներն ընդգրկվում են առևտրային արժեթղթերի կազմում կամ վարկային կազմակերպություններում եղած միջոցների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված դրանց ձեռքբերման նպատակից և պայմաններից, և հաշվետվություններում արտացոլվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ համապատասխան դասի ակտիվների նկատմամբ կիրառելի սկզբունքների հիման վրա:

3.7 Փոխառու միջոցներ

Թողարկվող ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Բանկը պարտավորություն ունի փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի ֆիքսված քանակությամբ դրամական միջոցները կամ այլ ակտիվները սեփական բաժնեմասային գործիքների ֆիքսված քանակությամբ փոխարինելուց: Նման գործիքները ներառում են ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ կառավարության առջև պարտավորությունները, վարկային կազմակերպությունների միջոցները, հաճախորդների միջոցները, թողարկված պարտատոմսերը, Գլխամասային կազմակերպության միջոցները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառու միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Պարտավորությունների ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի

ընթացքում, եկամուտներն ու ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Բանկի կողմից իր սեփական պարտավորության ձեռքբերման դեպքում վերջինս հանվում է ֆինանսական դրության մասին հաշվետվությունից, իսկ պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված միջոցների գումարի միջև եղած տարբերությունը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.8 Վարձակալություն

Ֆինանսական վարձակալություն (լիզինգ) - Բանկը որպես վարձակալ

Բանկը ֆինանսական վարձակալության պայմանագրերը ճանաչում է ֆինանսական դրության հաշվետվության ակտիվների և պարտավորությունների կազմում, վարձակալության ժամանակաշրջանի սկզբնական ամսաթվով՝ վարձակալվող գույքի իրական արժեքի գումարի չափով կամ ընթացիկ վարձավճարների նվազագույն գումարի չափով, եթե այդ գումարը ցածր է իրական արժեքից: Ընթացիկ վարձավճարների նվազագույն չափի՝ որպես դիսկոնտավորման գործակցի հաշվարկման համար օգտագործվում է վարձակալության պայմանագրի տոկոսադրույքը, եթե նման տոկոսադրույքի որոշումը հնարավոր է: Այլ պայմաններում օգտագործվում է Բանկի փոխառու միջոցների տոկոսադրույքը: Սկզբնական ուղղակի ծախսերն ընդգրկվում են ակտիվի կազմում: Վարձավճարները բաշխվում են ֆինանսավորման ծախսերի և պարտավորությունների մարման միջև: Վարձակալության ողջ ժամանակաշրջանի ընթացքում ֆինանսավորման ծախսերը վերագրվում են հաշվետու ժամանակաշրջաններին՝ այնպիսի ձևով, որպեսզի ապահովեն մնացորդային պարտավորության մշտական տոկոսադրույքով հաշվարկված ծախսերի արտացոլումը յուրաքանչյուր հաշվետվու ժամանակաշրջանի համար: Ֆինանսական վարձակալության պայմանագրով վարձակալի գործունեությանն անմիջականորեն վերաբերող ծախսերը հաշվառվում են վարձակալվող ակտիվների կազմում:

Ֆինանսական վարձակալություն (լիզինգ) - Բանկը որպես վարձատու

Բանկը վարձավճարների գծով դեբիտորական պարտքը ճանաչում է վարձակալության առարկայի մեջ զուտ ներդրումների գումարի չափով՝ սկսած վարձակալության ժամկետի սկզբնական ամսաթվից: Ֆինանսական եկամուտը հաշվեգրվում է զուտ ներդրումների հաշվեկշռային արժեքի մշտական եկամտաբերության պարբերական

նորմայի արտացոլման սխեմայով: Սկզբնական ծախսերը ներառվում են վարձավճարների գծով դեբիտորական պարտքի սկզբնական գումարի կազմում:

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Գույքի վարձակալությունը, որի դեպքում վարձատուն փաստորեն պահպանում է վարձակալության առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի հետ կապված ռիսկերն ու օգուտները, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության պայմանագրի գծով վճարները վարձակալության ժամկետի ընթացքում համամասնորեն դուրս են գրվում ծախսերով և հաշվառվում են գործառնական ծախսերի կազմում:

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձատու

Բանկը գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվներն արտացոլում է ֆինանսական դրության մասին հաշվետվությունում՝ ակտիվի տեսակին համապատասխան: Գործառնական վարձակալության պայմանագրի գծով վարձակալական եկամուտները վարձակալության ժամկետի ընթացքում համամասնորեն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ այլ եկամուտների կազմում: Վարձակալներին տրամադրված զեղչերի հանրագումարային արժեքը վարձակալության ժամկետի ընթացքում համամասնորեն արտացոլվում է որպես վարձակալական եկամտի կրճատում: Վարձակալության պայմանագրի կապակցությամբ կրած ուղղակի ծախսերը ավելացվում են վարձակալության հանձնված ակտիվի հաշվեկշռային արժեքին:

3.9 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Բանկն իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում է արժեզրկված միայն և միայն այն դեպքում, երբ առկա է արժեզրկման օբյեկտիվ վկայություն, որն առաջացել է ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունքում, և երբ այդ իրադարձությունը ազդեցություն է գործում ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկման հայտանիշները կարող են

ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի էական ֆինանսական դժվարությունների վկայությունները, նրանց կողմից տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, սնանկացման կամ ֆինանսական վերակազմակերպման բարձր հավանականությունը, ինչպես նաև դիտարկվող շուկաների տվյալների վրա հիմնված վկայություններ ակնկալվող ապագա դրամական հոսքերի նվազման, օրինակ, ժամկետանց վճարումների մակարդակի՝ ակտիվների արժեզրկման հետ կապված փոփոխության կամ տնտեսական պայմանների փոփոխության վերաբերյալ:

Միջոցներ վարկային կազմակերպություններում և հաճախորդներին տրված վարկեր

Վարկային կազմակերպություններում առկա միջոցների և հաճախորդներին տրված վարկերի համար, որոնց հաշվառումն իրականացվում է ամորտիզացված արժեքով, Բանկը արժեզրկման հայտանիշները սկզբնականորեն գնահատում է անհատական հիմունքով՝ էական ակտիվների համար, կամ հանրագումարային հիմունքով՝ անհատապես էական չհամարվող բոլոր ֆինանսական ակտիվների համար: Եթե Բանկը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, անկախ այն բանից, էական է այն, թե ոչ, ապա այդ ակտիվը ներառում է վարկային ռիսկերի համանման բնութագրիչներ ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և դրանց արժեզրկված լինելը գնահատում է հանրագումարային հիմունքով: Այն ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով, և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից կորուստներ, չպետք է գնահատվեն հանրագումարային հիմունքով:

Արժեզրկումից կորուստների օբյեկտիվ հայտանիշների առկայության դեպքում, կորուստի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և ակնկալվող ապագա դրամական հոսքերի (բացի վարկերի գծով դեռևս չկրած ապագա ակնկալվող ծախսերից) ներկա արժեքի տարբերությունը: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստի հաշվի օգտագործման միջոցով, և արժեզրկումից ծախսը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Տոկոսային եկամուտները շարունակում են հաշվեգրվել նվազեցված հաշվեկշռային արժեքով՝ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Վարկերը և համապատասխան պահուստները դուրս են գրվում այն դեպքում, եթե չկան վարկի հավաքագրման իրական հեռանկարներ, և բոլոր ապահովության միջոցներն իրացվել

են կամ փոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարում գնահատված արժեզրկման ծախսերի գումարն ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարի ճշգրտման միջոցով: Եթե դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Արժեզրկման հայտանիշների առկայության հանրագումարային գնահատման նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի վարկերի վարկանշման ներքին համակարգի հիման վրա, հաշվի առնելով վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպիսիք են ակտիվի տեսակը, ոլորտը, աշխարհագրական դիրքը, ապահովության տեսակը, վճարումների ժամկետայնությունը և այլ գործոններ:

Այն ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկվածությունը գնահատվում է հանրագումարային հիմունքով, որոշվում են ակտիվների գծով կրած վնասների պատմական տվյալների հիման վրա, որոնց գծով վարկային ռիսկի բնութագրիչները համարժեք են խմբի ակտիվների բնութագրիչներին: Կորուստների վերաբերյալ պատմական տվյալները ճշգրտվում են դիտարկվող շուկայի ընթացիկ տվյալների հիման վրա՝ նպատակ ունենալով արտացոլել գոյություն ունեցող այնպիսի պայմանների ազդեցությունը, որոնք ազդեցություն չեն գործել այն տարիների վրա, որոնց համար առկա են կորուստների գծով պատմական տվյալներ, և բացառել պատմական ժամանակաշրջանի այն պայմանների ազդեցությունը, որոնք ներկայումս գոյություն չունեն: Ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատումները արտացոլում և համապատասխանում են դիտարկվող շուկաներում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխություններին (օրինակ, գործազրկության մակարդակի, անշարժ գույքի գների, ապրանքների գների, վճարունակության կարգավիճակի կամ այլ գործոնների փոփոխություններ, որոնք վկայում են կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները կանոնավորապես վերանայվում են՝ կորուստների գնահատված և փաստացի արժեքների միջև առկա տարբերությունների նվազեցման նպատակով:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ներդրումներ

Բանկը անհատական հիմունքով գնահատում է մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների առկայությունը: Արժեզրկումից վնասներ կրելու օբյեկտիվ հայտանիշների առկայության դեպքում այդ վնասների գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և ակնկալվող ապագա դրամական հոսքերի բերված արժեքի տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է, իսկ վնասի գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Եթե հաջորդող տարում արժեզրկումից սպասվող վնասների գումարը նվազում է այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնք տեղի են ունեցել արժեզրկումից վնասների ճանաչումից հետո, ապա նախկինում ճանաչված գումարը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների առկայությունը:

Բաժնենասային գործիքներում ներդրումների համար, որոնք դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ են համարվում ներդրումների իրական արժեքի էական կամ տևական նվազումը դրանց սկզբնական արժեքի համեմատությամբ: Արժեզրկման հայտանիշների առկայության դեպքում կուտակված վնասները (որպես ձեռքբերման արժեքի և ընթացիկ իրական արժեքի տարբերություն, նվազեցրած ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում նախկինում ճանաչված՝ ներդրումների գծով արժեզրկումից վնասները) վերադասակարգվում են այլ համապարփակ եկամուտների կազմից և ճանաչվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Բաժնենասային գործիքներում ներդրումների արժեզրկումից վնասները չեն վերականգնվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության միջոցով: Արժեզրկումից հետո իրական արժեքի աճը ճանաչվում է անմիջականորեն կապիտալի կազմում:

Պարտքային գործիքների համար, որոնք դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների գնահատումն իրականացվում է

միևնույն սկզբունքներով, ինչ որ ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար: Տոկոսային եկամուտները հաշվեգրվում են իջեցված հաշվեկշռային արժեքների հիման վրա, օգտագործվելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել է արժեգրկումից վնասների գնահատման նպատակով ապագա դրամական հոսքերի գեղչման ժամանակ: Տոկոսային եկամուտներն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե հաջորդող տարում պարտքային գործիքի իրական արժեքն աճում է, և այդ աճը օբյեկտիվորեն կապված է այնպիսի իրադարձության հետ, որը տեղի է ունեցել արժեգրկումից վնասները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչելուց հետո, ապա արժեգրկումից վնասները վերականգնվում են՝ արտացոլվելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկերի վերակազմավորում

Բանկի ղեկավարությունը մշտապես վերանայում է վերակազմավորված վարկերը՝ հավաստիանալու համար, որ բոլոր չափանիշները պահպանվում են, և ապագա վճարումների իրականացումը հավանական է: Նման վարկերի համար շարունակում է կատարվել անհատական կամ հանրագումարային հիմունքով արժեգրկման գնահատում, և դրանց վերականգնելի արժեքի գնահատման համար օգտագործվում է է վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

3.10 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելիության դեպքում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է ֆինանսական դրության մասին հաշվետվությունում, եթե.

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Բանկը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պարտավորվել է ստացված դրամական հոսքերը ամողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի հիման վրա, ինչպես նաև

- Բանկը (ա) փոխանցել է ակտիվի գծով գործնականորեն բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ (բ) չի փոխանցել, բայց ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները, սակայն փոխանցել է տվյալ ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, եթե այն մարվում է, չեղյալ է համարվում, կամ լրացել է դրա գործողության ժամկետը:

Նույն վարկառուի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ կատարվում է գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն, հանգեցնում է նախկին պարտավորության ապաճանաչմանը և նոր պարտավորության ճանաչմանը, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.11 Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ ակրեդիտիվների, երաշխիքների և ակցեպտների տեսքով: Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը, ՖՅՄՍ (IAS) 39-ի համաձայն, սկզբնականորեն ճանաչվում են հաշվեկշռում իրական արժեքով՝ ստացված կոմիսիոն վճարի չափով, և արտահաշվեկշռում՝ տրամադրված երաշխիքի գումարի չափով: Պարտավորության սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր պայմանագրի գծով իր պարտավորությունը գնահատում է հետևյալ երկու մեծություններից առավելագույնով. սկզբնականորեն ճանաչված գումարով՝ նվազեցրած կուտակված ամորտիզացիան, կամ երաշխիքի գծով առաջացած ֆինանսական պարտավորության մարման համար անհրաժեշտ ծախսերի գումարով:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերի հետ կապված պարտավորությունների ավելացումը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ստացված կոմիսիոն վճարը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում համամասնորեն ճանաչվում է պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում:

3.12 Հարկում

Շահութահարկի գծով ընթացիկ ծախսերը հաշվարկվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվարկվում են հաշվեկշռային պարտավորությունների մեթոդով, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվությունների նպատակներով հաշվարկվող՝ ակտիվների և պարտավորությունների հարկային բազայի և դրանց հաշվեկշռային արժեքների գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ հետաձգված շահութահարկը ծագում է այնպիսի գործառնությունից՝ առաջացող գուդվիլի, ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման արդյունքում, որը չի հանդիսանում կազմակերպությունների միավորում և իրականացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են հաշվանցվել հարկային բազան նվազեցնող ժամանակային տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքներով, որոնք կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակաշրջանում՝ ելնելով հաշվետու ամսաթվի դրությամբ ուժի մեջ մտած կամ փաստացիորեն գործող օրենսդրության պահանջներից:

3.13 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները (սարքավորումներ) արտացոլվում են փաստացի արժեքով՝ առանց հաշվի առնելու ամենօրյա սպասարկման ծախսերը, նվազեցրած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Այդ արժեքը ներառում է սարքավորման փոխարինման հետ կապված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշները, որոնք ճանաչվում են ծախսերը կրելու ժամանակ:

Հիմնական միջոցների (սարքավորումներ) հաշվեկշռային արժեքը արժեզրկման առումով գնահատվում է այն դեպքում, երբ առաջանում են այնպիսի իրադարձություններ կամ իրավիճակների փոփոխություններ, որոնք վկայում են, որ տվյալ ակտիվի հաշվեկշռային արժեքը, հնարավոր է, չփոխհատուցվի:

Փաստացի արժեքով սկզբնական ճանաչումից հետո շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ, նվազեցրած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումից վնասները: Վերագնահատումը կատարվում է առնվազն հինգ տարին մեկ անգամ՝ վերագնահատված ակտիվի իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի եական տարբերություններից խուսափելու համար:

Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը բացառվում է միաժամանակ նվազեցնելով ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, և ստացված գումարը վերահաշվարկվում է ակտիվի վերագնահատված գումարի հիման վրա: Վերագնահատումից առաջացած արժեքի աճը արտացոլվում է այլ համապարփակ եկամուտների կազմում, բացի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում նախկինում արտացոլված՝ տվյալ ակտիվի նախկին նվազման արժեքի վերականգնման գումարից: Այս դեպքում ակտիվի արժեքի աճի գումարը վերագրվում է ֆինանսական արդյունքին: Վերագնահատումից առաջացած արժեքի նվազումը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացի ակտիվի արժեքի նման նվազման անմիջական հաշվանցումից դրա արժեքի նախկին աճի դիմաց, որն արտացոլված է հիմնական միջոցների վերագնահատման պահուստաֆոնդում:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստաֆոնդից գումարների ամենամյա փոխանցումը չբախված շահույթին իրականացվում է՝ ելնելով ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկվող մաշվածության գումարի և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկվող մաշվածության գումարի տարբերությունից: Ակտիվի շրջանառությունից դուրս գալուց հետո, վերագնահատման պահուստաֆոնդում ընդգրկված համապատասխան գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Օբյեկտի մաշվածության հաշվարկումը սկսվում է այն ժամանակ, երբ այն դառնում է օգտագործման համար պիտանի: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվի օգտակար ծառայության հետևյալ գնահատված ժամկետների ընթացքում.

	<i>Տարիներ</i>
Շենքեր և շինություններ	20
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5
Կապի և հաղորդակցության միջոցներ, համակարգչային տեխնիկա և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա	3
Փոխադրամիջոցներ	5
Այլ հիմնական միջոցներ	5

Ակտիվների մնացորդային արժեքը, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերլուծության են ենթարկվում յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջին և, անհրաժեշտության դեպքում, վերանայվում են:

Վերակառուցման և վերանորոգման ծախսերը ներառվում են գործառնական ծախսերի կազմում դրանց կատարման պահին, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ենթակա են կապիտալացման, մասնավորապես կապիտալ վերանորոգումը:

3.14 Այլ ոչ նյութական ակտիվներ

Այլ ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ապահովումը և լիցենզիաները:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնականորեն գնահատվում են փաստացի արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների փաստացի արժեքը իրենից ներկայացնում է դրանց իրական արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են փաստացի արժեքով՝ նվազեցրած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից վնասները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետը կարող է լինել սահմանափակ կամ անորոշ: Օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ ունեցող ակտիվները

ամորտիզացվում են մինչև 10 տարի կազմող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում և արժեզրկման տեսանկյունից գնահատվում են այն դեպքում, երբ առկա են ոչ նյութական ակտիվների հնարավոր արժեզրկման հայտանիշներ:

3.15 Վաճառքի համար մատչելի ակտիվներ

Բանկը չըջանառվող ակտիվները (կամ շրջանառությունից դուրս եկող խումբը) դասակարգում է որպես վաճառքի համար մատչելի, եթե դրանց հաշվեկշռային արժեքի վերականգնումը նախատեսված է իրացման գործարքով, այլ ոչ թե օգտագործման ընթացքում: Դրա համար, չըջանառվող ակտիվները (կամ շրջանառությունից դուրս եկող խումբը) պետք է մատչելի լինեն անմիջապես վաճառքի համար իրենց ներկայիս տեսքով՝ այն պայմաններով, որոնք նմանատիպ ակտիվների վաճառքի համար հանդիսանում են սովորական, տիպային, ընդ որում վաճառքի հավանականությունը պետք է լինի բարձր:

Վաճառքի բարձր հավանականությունը ենթադրում է Բանկի ղեկավարության հաստատուն մտադրություն՝ հետևելու չըջանառվող ակտիվի (կամ շրջանառությունից դուրս եկող խմբի) իրացման ծրագրին: Ընդ որում, անհրաժեշտ է ձեռնարկել գնորդների որոնման և նշված ծրագրի իրականացման ակտիվ գործողություններ: Դրա հետ մեկտեղ, չըջանառվող ակտիվը (կամ շրջանառությունից դուրս եկող խումբը) պետք է ակտիվորեն առաջարկվի հիմնավորված գնով ելնելով դրա ընթացիկ իրական արժեքը: Բացի դրանից, իրացման արտացոլումը որպես ավարտված գործարք պետք է տեղի ունենա մեկ տարվա ընթացքում՝ սկսած չըջանառվող ակտիվը (կամ շրջանառությունից դուրս եկող խումբը) որպես վաճառքի համար մատչելի դասակարգելու ամսաթվից:

Բանկը չըջանառվող ակտիվները (կամ շրջանառությունից դուրս եկող խումբը) դասակարգում է որպես վաճառքի համար մատչելի՝ հաշվեկշռային և իրական արժեքներից նվազագույնով, նվազեցրած վաճառքի ծախսերը: Այնպիսի իրադարձությունների առաջացման կամ հանգամանքների փոփոխության դեպքում, որոնք վկայում են ակտիվների (կամ շրջանառությունից դուրս եկող խմբի) հաշվեկշռային արժեքի արժեզրկման հավանականության մասին, Բանկը ճանաչում է արժեզրկումից վնաս՝ դրանց արժեքի ինչպես սկզբնական դուրսգրման, այնպես էլ

հետագա դուրսգրումների ժամանակ՝ մինչև իրական արժեքը, նվազեցրած վաճառքի ծախսերը:

3.16 Պահուստներ

Պահուստը իրենից ներկայացնում է ժամանակի կամ կատարման գումարի առումով անորոշ պարտավորություն:

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը անցյալում տեղի ունեցած որոշակի իրադարձության արդյունքում ներկայումս ունի իրավաբանորեն կամ կանոնակարգված պարտավորություններ, և բարձր է հավանականությունը, որ դրանց մարման համար կպահանջվի ապագա տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և այդ պարտավորությունները կարելի է գնահատել բավարար աստիճանի արժանահավատությամբ:

3.17 Կենսաթոշակային ապահովում և այլ արտոնությունների աշխատակիցներին

Բանկը չունի կենսաթոշակային ապահովման լրացուցիչ սխեմաներ, բացի մասնակցությունից Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին: Կենսաթոշակային հատկացումների գծով ծախսերը արտացոլվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, որին վերագրվում է համապատասխան աշխատավարձը: Բանկը չունի աշխատակիցների աշխատանքային գործունեության դադարեցումից հետո նրանց համար նախատեսված էական արտոնություններ:

3.18 Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերն արտացոլվում են կապիտալի կազմում: Երրորդ կողմերին ծառայությունների դիմաց վճարման գծով ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են նոր բաժնետոմսերի թողարկման հետ, բացառությամբ ձեռնարկատիրական միավորման դեպքերի, արտացոլվում են կապիտալի կազմում՝ որպես տվյալ թողարկման արդյունքում ստացված գումարի նվազում: Եթե ստացված միջոցների իրական արժեքը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը,

ապա տարբերությունը արտացոլվում է հիմնական կապիտալի կազմում՝ որպես էմիսիոն եկամուտ:

Յետ գնված սեփական բաժնետոմսեր

Բանկի կողմից սեփական բաժնետոմսերի գնման դեպքում բաժնետոմսերի ձեռքբերման արժեքը, ներառյալ գործարքի գծով համապատասխան ծախսերը, նվազեցրած շահութահարկը, դուրս է գրվում կապիտալի ընդհանուր գումարից որպես թողարկված սեփական բաժնետոմսեր՝ ընդհուպ մինչև դրանց չեղյալ համարվելը կամ վերաթողարկումը: Նման բաժնետոմսերի հետագա վաճառքի կամ վերաթողարկման դեպքում ստացված գումարն ընդգրկվում է կապիտալի կազմում: Յետ գնված սեփական բաժնետոմսերը հաշվառվում են միջին կշռված արժեքով:

Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և հաշվետու ամսաթվի դրությամբ դուրս են գրվում կապիտալից միայն այն դեպքում, եթե դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը (ներառյալ): Շահաբաժինների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հաշվետվություններում, եթե դրանք առաջարկվել են մինչև հաշվետու ամսաթիվը, ինչպես նաև եթե առաջարկվել կամ հայտարարվել են հաշվետու ամսաթվից հետո, սակայն մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը:

3.19 Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական ակտիվը իրենից ներկայացնում է հնարավոր ակտիվ, որն առաջանում է չալանավորված կամ այլ անսպասելի իրադարձությունների արդյունքում, որոնք բերում են Բանկի կողմից տնտեսական օգուտ ստանալու հավանականության առաջացմանը: Որպես օրինակ է կարող է ծառայել այնպիսի դատական գործընթացի շրջանակներում Բանկի կողմից ներկայացված պահանջը, որի ելքը անորոշ է:

Պայմանական պարտավորությունն իրենից ներկայացնում է՝

(ա) անցած իրադարձությունների արդյունքում առաջացող հնարավոր պարտավորություն, որի առկայությունը կհաստատվի միայն մեկ կամ մի քանի անորոշ

ապագա իրադարձություններ տեղի ունենալու դեպքում, որոնց նկատմամբ Բանկը լիարժեք հսկողություն չունի:

(բ) անցած իրադարձությունների արդյունքում առաջացած՝ փաստացի գոյություն ունեցող պարտավորություն, որը հաշվետվություններում չի արտացոլվում, քանի որ:

i փոքր է հավանականությունը, որ պարտավորության մարման համար կպահանջվի տնտեսական օգուտներ ներառող ռեսուրսների արտահոսք:

ii պարտավորության գումարը չի կարող գնահատվել բավարար արժանահավատությամբ:

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական դրության մասին հաշվետվությունում, ընդ որում՝ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված ռեսուրսների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական դրության մասին հաշվետվությունում (Հաշվապահական հաշվեկշիռ), ընդ որում՝ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է այն դեպքում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ստացումը համարվում է հավանական:

3.20 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Տոկոսային և հանձնման եկամուտներ և ծախսեր

Բոլոր ֆինանսական գործիքների համար, որոնք գնահատվում են ամորտիզացված արժեքով, և բոլոր տոկոսային ֆինանսական գործիքների համար, որոնք դասակարգված են որպես առևտրային և վաճառքի համար մատչելի, տոկոսային եկամուտներն ու ծախսերը արտացոլվում են արդյունավետ տոկոսադրույքով, որի զեղչման միջոցով սպասվելիք ապագա դրամական վճարումները և մուտքերը, ֆինանսական գործիքի օգտագործման ամբողջ ենթադրվող ժամանակահատվածում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, որտեղ դա կիրառելի է, ճշգրտորեն բերում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները և գործիքի հետ անմիջականորեն կապված կոմիսիոն կամ լրացուցիչ ծախսերը, որոնք հանդիսանում են արդյունավետ տոկոսադրույքի

անբաժանելի մասը: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է Բանկի կողմից վճարումների կամ մուտքերի վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը հաշվառվում է որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

Կոմիսիոն եկամուտներ

Բանկը ստանում է կոմիսիոն եկամուտներ հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից: Կոմիսիոն եկամուտները կարող են բաժանվել հետևյալ երկու խմբերի.

- Կոմիսիոն եկամուտներ, որոնք ստացվում են որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից.

Որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից ստացվող կոմիսիոն եկամուտները հաշվեգրվում են այդ ժամանակաշրջանի ընթացքում: Այդպիսի հոդվածները ներառում են կոմիսիոն եկամուտներ և վարձատրություն ակտիվների կառավարման, պատասխանատու պահպանման և այլ կառավարչական ու խորհրդատվական ծառայությունների համար: Վարկերի տրամադրման պարտավորության դիմաց կոմիսիոն վճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի տրամադրման հետ կապված այլ կոմիսիոն վճարները վերագրվում են ապագա ժամանակաշրջաններին (վարկերի տրամադրման հետ անմիջականորեն կապված այլ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

- Կոմիսիոն եկամուտներ, որոնք ստացվում են գործառնությունների իրականացման գծով մատուցվող ծառայություններից.

Երրորդ անձի անունից գործարքի իրականացման բանակցություններ անցկացնելու կամ դրանց մասնակցելու համար (օրինակ՝ արժեթղթերի գնման համաձայնագրի կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքում) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո: Կոմիսիոն վճարները կամ դրանց

բաղկացուցիչ մասերը, որոնք կապված են եկամտաբերության որոշակի ցուցանիշների հետ, ճանաչվում են համապատասխան ցուցանիշների կատարումից հետո:

3.21 Արտարժույթի վերահաշվարկ

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է բացառապես ՀՀ դրամով, որը Բանկի գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթի՝ գործարքի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին շուկայական փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամական ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթի՝ հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին շուկայական փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտներ - Արտարժույթային հոդվածների վերագնահատում» հոդվածում: Ոչ դրամական հոդվածները, որոնք արտացոլված են փաստացի արժեքով՝ արտարժույթով, վերահաշվարկվում են գործարքի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին շուկայական փոխարժեքով: Ոչ դրամական հոդվածները, որոնք արտացոլված են իրական արժեքով՝ արտարժույթով, վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ գործող՝ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին շուկայական փոխարժեքով: Ոչ դրամական հոդվածներին են վերագրվում, մասնավորապես, հիմնական միջոցները, անավարտ կապիտալ շինարարությունը:

Արտարժույթով կատարված գործարքի գծով պայմանագրային փոխարժեքի և գործարքի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին շուկայական փոխարժեքի տարբերությունը ընդգրկվում է եկամուտների կազմում՝ նվազեցրած արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: